ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ
հրավերում փոփոխություններ կատարելու մասին

Հայտարարության սույն տեքստը հաստատված է գնահատող հանձնաժողովի

2018 թվականի մայիսի 18-ի թիվ 1 որոշմամբ և հրապարակվում է

«Գնումների մասին» ՀՀ օրենքի 29-րդ հոդվածի համաձայն

Պատվիրատուն՝ «Տրանսպորտային ծրագրերի իրականացման կազմակերպություն» ՊՈԱԿ, որը գտնվում է Երևան 0010, Տիգրան Մեծի 4, 7-րդ հարկ հասցեում, ստորև ներկայացնում է «ՏԾԻԿ-ԱՇՁԲ-2018/1ՆԱ» ծածկագրով հայտարարված ՄԱ միջոցով գնում կատարելու ընթացակարգի հրավերի փոփոխության պատճառները և կատարված փոփոխությունների համառոտ նկարագրությունը՝

Փոփոխության պատճառ՝ Պատասխանատու ստորաբաժանման զեկուցագիր:

Փոփոխության նկարագրություն՝ Հիմք ընդունելով պատասխանատու ստորաբաժանման զեկուցագիրը՝ գնահատող հանձնաժողովը որոշեց կատարել հրավերի փոփոխություն, ըստ որի՝

1. Հրավերի «Գնման առարկայի բնութագիրը» կետի 1.1 ենթակետում կատարվել է հետևյալ վերաձևակերպումը. «Սույն հրավերով նախատեսված աշխատանքների կատարման համար պահանջվում է «Քաղաքաշինական փաստաթղթերի մշակման և փորձաքննության» լիցենզիա ըստ հետևյալ ոլորտների՝ *հիդրոտեխնիկական, էներգետիկ, կապի*»:
2. Հրավերի 2.5 կետի 1-ին ենթակետի ա. պարբերությունը վերաձևակերպվել է հետևյալ խմբագրությամբ. «մասնակիցը հայտով ներկայացնում է իր կողմից հաստատված հայտարարություն՝ համանման (նմանատիպ) պայմանագրի կատարման փորձառություն ունենալու մասին:

Սույն ընթացակարգի իմաստով նմանատիպ են համարվում *հիդրոտեխնիկական, էներգետիկ, կապի* ոլորտներում նախագծային աշխատանքների իրականացումը աշխատանքների կատարված լինելը (շինարարական ծրագրերի դեպքում տնտեսական գործունեության նույն խմբերը սահմանվում են հաշվի առնելով քաղաքաշինության բնագավառում լիցենզավորման ենթակա գործունեության տեսակը և ներդիրները):»

3. Մրցույթի հայտարարության տեքստում հայտերը ներկայացնելու վերջնաժամկետ սահմանել ս.թ. մայիսի 23-ը, ժամը՝ 15:00:

Փոփոխության հիմնավորում՝ Պատասխանատու ստորաբաժանման զեկուցագիր:

Սույն հայտարարության հետ կապված լրացուցիչ տեղեկություններ ստանալու համար կարող եք դիմել գնումների համակարգող՝ Մ. Մովսիսյանին:

Հեռախոս՝ 012 201009
Էլեկտրանային փոստ՝ mari.movsisyan@tpio.am

Պատվիրատու՝ «Տրանսպորտային ծրագրերի իրականացման կազմակերպություն» ՊՈԱԿ